

ՆՐԱՅԻՆՆԵՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. հէ՞ս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէսով.

Թիֆլիսում գրքուղում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелі».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջ օրերէն).

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խմբագրութիւնը տողատեղին 10 կոպէսով.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՈՐ ԱՐԾՈՒՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Կրթական զբոսանքներ.—Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Գանի ու չէ. Նամակ Երանդի. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒ ԹԻՒՆ. Սերբական գէպերի առիթով.
Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐ-
ՐԱՅԻՆՆԵՐ.—ԱՆԱՆԱՐԱՅԻՆ. Նամակ Գեր-
մանիայից.

ԿՐԹԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔՆԵՐ

Թիֆլիսում ներկայումս տեղի ունի ու-
սուցչական մի ժողով, որ ըննութեան է
ենթարկում դպրոցական կեանքի վերա-
բերեալ զանազան խնդիրներ: Այդ ժողովի
մէջ ըննութեան հարցերից մէկն էր դպ-
րոցական ճանապարհորդութիւններ կամ
զբոսանքներ կազմակերպելու հարցը, որ
մեր երկրում միայն նոր-նոր է սկսում նը-
շանակութիւն ստանալ գործնական կեան-
քում և սկսել է մուտք գործել նաեւ հայոց
դպրոցական կեանքում, իբրեւ նախնական
փորձ:

Եստիով Վշակին № 73-ում ներսի-
սեան դպրոցի աշակերտների կատարած մի
փոքր ճանապարհորդութեան մասին գէպի
հաղորատ և Սանատին, մենք ցանկութիւն
յայտնեցինք, որ այդ տեսակ զբոսանքները
ստանան աւելի մեծ ծաւալ մեր դպրոց-
ների կեանքում և կազմակերպվեն իբրեւ
մի սխառնական գործ: Դպրոցական այդ-
պիսի զբոսանքները շատ լաւ առիթ են
ճանապարհորդութեան կրթական և քաղաք-
անիւնների մէջ դիտողութիւններ անելու ըն-
դունակութիւն, հանգստացնելու աշակերտ-
ների լարված ջղերը և տալու նրանց կազ-

ԳՐԱԳՈՐ Եւ ԹԱՐԱԳՈՐ ԶՈՒԱՐՈՒԹԻՒՆ:

Ուսուցչական ժողովը, ընդունելով զբո-
սանքների կրթական նշանակութիւնը,
եկաւ այն եզրակացութեան, որ նա չը
պէտք է կրէ բոլորովին պատահական մի
ընթացութիւն, այլ որ նա պէտք է տեղի
ունենայ, իբրեւ մի մտածված և լաւ նա-
խապատրաստված գործ. այդ պատճառով
կարեւոր է, որ զբոսանք կազմակերպողնե-
րը լաւ գիտենան և ճանաչեն այն տեղե-
րը, որտեղ պէտք է կատարվեն ճանա-
պարհորդութիւններ, որպէս զի աշակերտ-
ները կարող լինեն հեղինակաւոր խօսք
լսել զբոսանքի զեկամբարից և հնարաւո-
րութիւն ունենան յազեցնել իրանց հե-
տաքերը: Թիֆլիսում լրակատար կերպով Ու-
սուցչական ժողովը գտնում է, որ թէ
դպրոցական վարչութիւնները և թէ հա-
սարակական հիմնարկութիւնները պէտք է
նախօրոք հոգան զբոսական միջոցներ
գտնելու: այդ զբոսանքները կատարելու
համար:

Մենք շատ ուրախ ենք, որ դպրոցական
զբոսանքներ կատարելու խնդիրը ըննու-
թեան և մշակութեան առարկայ դարձաւ
իրեւ հերթական մի հարց և որ նրանց
կազմակերպութեան հոգսը նկատվում է
իրեւ դպրոցական վարչութեան հոգսերից
մէկը: Սակայն մի հիմնական կէտ մնում է
կարեւոր, այդ այն է, որ զբոսանքներ կազ-
մակերպելը չը դառնայ գործնականու-
թեան մէջ դարձեալ մի ձևական, տաղա-
կալի մի ձեւնարկութիւն և կորցնէ այն
կրթական և Թարմացնող տարրը, որը և
կազմում է նրանց էութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆԻ ՈՒՇ ԶԻ

Ապրիլի կէսը և ողջ մայիսը անցան Անդր-
կովկասի շատ տեղերի համար անձրևների մէջ:
Մայիսին, ընդ բացառութեամբ, գրեթէ ամէն
օր գալիս էին անձրևներ, թեթեւ, շատ անգամ
մի քանի րոպէ միայն, ապա՝ երկինքը պարզ-
վում էր և արեւ սկսում էր ուժեղ ներգործել:
Մի կողմից անձրևները, ուրեմն և խո-
նավութեանը, միւս կողմից արեւ արեցին այն,
որ, ինչպէս ասում են, քարն էլ կանայեց:

Բայց չորսիւ հէնց այդ իսկ երկու գործոն-
ների չափից աւելի շատութեան, զարգացան
մեր այգիներում, պարտէզներում բոլոր տե-
սակի միկրօօրգանիզմներ, որոնց վնասակար
տեսակները անուանվում են անկային հիւան-
դութիւններ, իսկ դրանց մէջ միջոցաւ (pero-
nospora viticola), գոնէ Երևանի այգիներում,
տեղ-տեղ այն աստիճան զարգացման է հասել,
որ կասկածում ենք՝ ո՛չ չէ արդեօք կու՛ն նրա
գէտ: Մի քանի տեղ նկատել եմ նաև տերեւի
գորշութիւն—plasmadiophora vitis և, եթէ չեմ
սխալվում, նաև Black-rot. Օրդիում (շոռ),
գետ և չը կայ, բայց որ պէտք է սպասել և
այդ հիւանդութեանը—գա անկասկած է:

Ժամանակ է, որ մեր այգեւէտները, քանի
դեռ ևս ու՛շ չէ, վերահաս վտանգի առաջն առ-
նելու միջոցների մասին լրջօրէն մտածեն:

Պղնձէ արջասպի (мѣдный купоросъ) սեր-
կումը միակ միջոցն է, թէ չը կան լաւ գոր-
ծիւնքներ, մինչև ձեռք բերելը գոնէ, հասարակ
աւելներով կարելի է սրկել խաղողի թու-
փերը:

Յիշեցնում ենք սրկման եղանակը:
10 վերջո ջրի մէջ խառնել 7 ֆունտ ար-
ջասպ, նախապէս այս վերջինը լուծելով մի ա-

մանի մէջ. ապա վերցնել 2—3 ֆունտ չը բա-
ցած կիր բացել և խառնել արջասպի հետ, և
այս խառնուրդը օձել վերև յիշած 10 վերջո
ջրի հետ և լաւ խառնել, կը ստացվի բաց կապ-
տագոյն մի հեղուկ, որը և աւելներով սրկել
խաղողի թփերի վրա, կրկին այս բանը երեք
անգամ այժմ, մի ամսից և օգոստոսի սկզբին:
Առաջին բժշկութեանը կը գնայ 14 ֆունտ
արջասպ. երկրորդ անգամ 10 ֆունտ և եր-
րորդ՝ դարձեալ տաս ֆունտ—ընդամենը 1
պուղ մի գետեառին: և կը նստի գետեառի-
նին ընդամենը 10—14 ռուբլի ծախս, հաշե-
լով և մշակների ծախսը:

Իսկ եթէ չը բժշկվի և հիւանդութեանը տա-
րածվի, այգեւէտը կը կորցնէ իր սպասածի 1/2-ը:
Գանի ու չէ, պէտք է շտապել:

Մեզնում շատերը օրդիումը չփոխում են
միջոցների հետ և այս վերջինը բժշկում ծծում-
բով. այսպիսի բժշկութիւնը, ըսական է, կը մնայ
առանց հետևանքի:

Ա. ԱՅՄԱՆԱՆ

ՆԱՄԱԿ ԵՐԱՆԻՍԻՑ

ԾՈՒՆԻՍԻ 1-ին

Այսօր, քաղաքային կշիռի ծածկոցի տակ,
տեղի ունեցան քաղաքային ճանաւորների լրա-
ցուցիչ ընտրութիւնները: Ինչպէս յայտնի է,
պէտք է ընտրել 60 ձայնաւոր և 12 կանդի-
դատ, այն ինչ առաջին ընտրութեան ժամանակ
ընտրվեցին ընդամենը 44-ը, (տես Վշակ №
102): Ուրեմն այսօր պէտք է ընտրել դար-
ձեալ 28-ը: Բայց ինչ դուրս եկաւ:

Ընտրութեանը այսօր մասնակցում էին 254
հոգի, որոնցից հայեր 170, իսկ թուրքեր 76:
Հրված էին 34 տուփեր: Ի նկատի ունենալով
այն հանգամանքը, որ շատ թէ քիչ աչքի ընկ-
նող անձնատրութիւններ, որոնք կարող էին
պիտանի ձայնաւորներ լինել, գծում թայֆայի

էր հին դարի ջրային ամենամեծ բեղերուարը,
որ իր մէջ մօտ 60 միլիօն խորանարդ մետր
ջուր էր պարունակում: Այդ թագաւորի կո-
թողներէն մէկը 1891 թւին գտել է զօկտօր
Բեյքը և ուղարկել Բերլինի թանգարանին, որ
Ռուզաբի լճի մասին մանրամասն տեղեկու-
թիւններ է հաղորդում: Վառում կատարված
պեղումները երևան հանքերի բազմաթիւ տա-
ճարներ, գոհարաններ, գիտաւ մասաններ ու
կարասներ, որոնցից ոմանք 600 լետր գինի
էին պարունակում: Բացի դրանցից երևան ե-
կան և բազմաթիւ իրեր, չինված՝ ոսկերի,
պղնձից և երկաթից: Խաղչերին յայտնի էր և
արծաթ սեղաններ արհեստը, որ ներկայումս
էլ գոյութիւն ունի:

Իօկտօր Բեյքը Վանից մի ճանապարհորդու-
թիւն կատարեց գէպի Տիգրիսի ափերը, որո-
նց գետի այն մասը, որտեղով մի ժամանակ
Գեհնեֆօնն է անցել, այցելեց Մօսուլը և ու-
սուցչական այն բուրները, որոնց վրա չին-
ված է եղել Ասորեստանի մայրաքաղաք Նի-
նուէն: Մինչև այսօր էլ երևում են այդ աւե-
րակները, բայց դրանց դժբաղդաբար չէ կա-
րելի ուսուցչական, որովհետև նրանց վրա
ներկայումս չինված է թիւրքական մի մզկիթ,
ըստ աւանդութեան Յովնան մարգարէի գե-
րեզմանի վրա: Այդ աւերակները վկայում են,
որ Ասորեստանի գրեթէ բոլոր քաղաքները
մի և նոյն ճարտարապետութիւն են ունեցել:
Նրա քաղաքները սովորաբար չինում էին մի-
խարդաւոր աղիւններից բաղկացած պլա-
ֆօրմների վրա, օր. Արեւլան, աշխարհի ամե-
նակն քաղաքներից մէկը, չինված էր մի այդ-
պիսի պլաֆօրմի վրա:

Տիգրիսի ափում Բեյքը մի ժայռի վրա գտել
է Թեգլատ-Պիլեսարը կործանեց Վանը,
բայց չը կարողացաւ տիրել նրա միջնաբերդին:
Հէնց այդ թւականից ի վեր նախահայերը
իբրև քաղաքական անկախ ոյժ հետզհետէ
կորցնում են իրանց նշանակութիւնը և տեղի
են տալիս ուրիշ ժողովուրդներին, ի միջի այլոց
և հնդկա-գերմանական հայերին, որոնք սկսել
էին երևալ Վանի լճի չորս կողմերում: Խա-
ղերի Ռուզա թագաւորի լիճը ներկայացնում

Լ. Բաբայան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐԱՆԻՍԻՑ

Լայպցիգ, յունիսի 6-ին

Հայաստանը հին դարում և ներ-
կայումս

1891 թ. բաղնայաքար Բեյքը գնաց Վան,
գտաւ այնտեղ 30 նոր սեպած արձանագրու-
թիւններ, որոնց կարգաւոր գաղտնիքը նա գեր-
մանացի հայագէտ պրօֆէսօր Լէմանի հետ
գտաւ: Այդ ժողովուրդն իրան կոչում էր Խալ-
դեր, որ չը պէտք է չիթիլ Միջագետքի քաղ-
ղաքների հետ: Գերմանական գիտական աշ-
խարհը տեսնելով, որ վերջինս արձանագրու-
թիւնները մեծ լոյս կարող են փռել այդ երկ-
րի հին կուլտուրայի ուսումնասիրութեան վրա,
աշխատեց ներթափանց միջոցներ գտնել և ձեռն-
հաս մարդկանց չորսիւ գիտական մի էկսպե-
դիցիոն կազմակերպել ապա այդ երկրներ ուսում-
նասիրելու համար: Գերմանական կայսրի, Վեր-
լիովան ֆոնի, Բերլինի և Գիթթինգենի հա-
մալսարանների գիտութեանց ձեռնարկների
և մասնաւոր նուիրատուների ներթափանց
կցութեամբ ժողովեց մօտ 90,000 մարկ (45,000
ր.), որի չորսիւ էկսպեդիցիոն ճանապարհից
դէպի Հայաստան 1898 թ. էկսպեդիցիոն Գեր-
մանիայից հասաւ: Թիֆլիս, Սևանայ լճի շրջա-
կայքը, էջմիածին, Թաւրիզ և այլն:

Գիտական այդ արշաւանքի զլուխ անցած
Բեյքը և Լեման հայագէտ գիտականները, վա-
նահայով քաղաքական յարաբերութիւններից,
չապագեցին վան, սեպածներէն մինչև փետր-
վար ամիսները մի շարք պեղումներ կատարե-
ցին և այցելեցին Մօսուլ, Գաւառիլա, Արա-
ւա պատմական տեղերը, որտեղ հնագիտական
մի քանի գիւտեր արեցին: Դրանից յետոյ
պրօֆ. Լեման շուտով Գերմանիա վերադար-
ձաւ, այն ինչ զօկտօր Բեյքը միայնակ դեռ շա-
րունակեց իր գիտական ուսումնասիրութիւնը
և վեց ամիսից յետոյ վերադարձաւ Բերլին:

